ՀՈԴՎԱԾՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ
СТАТЬИ И СООБЩЕНИЯ

ՎԱՉԳԵՆ ՉԱԼՈՅԱՆ

(Ծննդյան 80-ամյակի առթիվ)

ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Ս. Ս. ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

Սովետահայ անվանի գիտնական, Հայկական ՍՍՀ ԳԱ թղթակից անդամ, ՀՍՍՀ գիտության վաստակավոր գործիչ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր Վ. Չալոյանը հայ պատմափիլիսոփայական գիտության երախտավորներից էր, որի ծննդյան 80-ամյակը լրացավ վերջերս։

Վազգեն Կարապետի Չալոյանը ծնվել է 1905 թ. հունվարի 7-ին, Ալեքսանդրապոլում (այժմ Լենինական), բանվորի ընտանիքում։ Երիտասարդության տարիները համընկան Հայաստանում սովետական կարգերի հաստատման, սոցիալիստական շինարարության և ազգային դարթոնքի ժամանակաշրջանին։ 1926 թ. ավարտելով Երևանի պետական համալսարանի պատմագրական ֆակուլտետը, Վ. Չալոյանը անցնում է մանկավարժական աշխատանքի, դասավանդում հանրապետության միջնակարգ և բարձրագույն ուսումնական հաստատություններում։ 1930—1934 թթ. եղել է Հայաստանի պատմության և արվեստի թանգարանի տնօրենը։ Հայ ժողովրդի հարուստ անցյալի, նրա հոգևոր մշակույթի հանդեպ ունեցած մեծ սերն ու հետաքրքրությունը, գիտնականի բնատուր խառնվածքը Վ. Չալոյանին մղում են հայագիտության ասպարեզ։ Կատարելագործելով իր գիտելիքները Մոսկվայի փիլիսոփայության, գրականության և պատմության ինստիտուտի ասպիրանտուրայում, նա 1938 թ. սկսած մինչև կյանքի վերջը ամբողջությամբ նվիրվում է հայ փիլիսոփայական մտքի պատմության հետազոտման գործին, դառնալով այդ նոր ճյուղի սկզբնավորողն ու հիմնադիրը։ 1939 թ. «V դարի հայ փիլիսոփա Եղնիկ Կողբացու ուսմունքի հարցի շուրջը» աշխատության համար նրան շնորհվում է փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, իսկ 1946 թ. «Դավիթ Անհաղթի փիլիսոփայությունը» աշխատության համար՝ փիլիսոփայական գիտությունների դոկտորի աստիճան։ 1943 թ., որպես ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի փիլիսոփայության սեկտորի, իսկ 1969-ից մինչև իր կյանքի վերջը՝ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող Վ. Չալոյանը ծավալել է արգասավոր գիտական գործունեություն և գլխավորել փիլիսոփա-պատմաբանների երիտասարդ կադրերի սպատրաստման պատասխանատու և շնորհակալ աշխատանքը։ Հայրենիքը բարձր է գնահատել նրա վաստակը։ 1965 թ. Վ. Չալոյանը ընտրվել է ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ, իսկ 1967 թ. արժանացել է ՀՍՍՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչման։ Նա պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով և մի շարք մեդալներով, արժանացել է ՀՍՍՀ ԳԱ Մեսրոպ Մաշտոցի անվան մրցանակի (1977 թ.)։ Վախճանվել է 1981 թ. մարտի 24-ին։

Իր ողջ գիտական գործունեությունը Վ. Չալոյանը նվիրել է մի բնագավառի՝ հայ փիլիսոփայության պատմության հետազոտմանը, հոգևոր մշակույթի մինչ այդ չուսումնասիրված բնագավառի՝ հայ ժողովրդի փիլիսոփայական

ժառանգության լուսաբանմանը։ 1940-ական թթ., երբ Վ. Զալոյանի ջանքերով հայ փիլիսոփայության պատմությունը՝ որպես հայագիտության մի նոր գիտակարգ, ներկայացավ ընթերցողներին, գիտական հասարակայնությունը մի փոքր զարմանքով և թերահավատությամբ ընդունեց առաջին ուսումնասիրությունները։ Այդ տարիներին դեռևս այն կարծիքն էր տարածված, թե փիլիսոփայությունը հայոց մեջ չի զարգացել և այդ պատճառով էլ, իբր, հիմք չկա զբաղվելու մի գիտության պատմությամբ, որը հնում միաձուլված է եղել աստվածաբանության կամ բնագիտության, իսկ նոր ժամանակներում՝ քաղաքական, տնտեսագիտական և գրականագիտական մտքի հետ։ Հայ փիլիսոփայական մտքին նվիրված Վ. Զալոյանի առաջին ուսումնասիրություններն ընկալվեցին որպես շարունակություն չունեցող մի փորձ, բայց ոչ որպես հեռանկար ունեցող գործի սկիզբ։ Այդ կասկածներն ու թերահավատությունը ցրելու համար մեծ ջանքեր էին պետք։ Հրապարակելով Եղնիկ Կողբացուն, իսկ այնուհետև Դավիթ Անհաղթին նվիրված իր մենագրությունները և ցույց տալով նրանց դերը հայ փիլիսոփայական մտքի զարգացման գործում, Վ. Զալոյանը ձեռնամուխ եղավ հին և միջնադարյան շրջանների համապարփակ հետազոտմանը։

Այդ դժվարին աշխատանքը նա տարավ մեծ մասամբ անտիպ փիլիսոփայական երկերի, Մաշտոցի անվան Մատենադարանի ֆոնդերում պահվող տասնյակ ձեռագրերի հետազոտմանը զուգահեռ։ Երկարամյա աշխատանքի արդյունքները ամփոփվեցին մեկ հատորում, «Հայոց փիլիսոփայության պատմություն» արժեքավոր մի գրքում, որը լույս տեսավ 1959 թ.։ Նույն 1950-ական թթ. լույս տեսան Վ. Զալոյանի ղեկավարությամբ գրված մի շարք երիտասարդ գիտնականների աշխատությունները, որոնք նրա ընդհանրացնող ուսումնասիրությունը լրացնում էին խոշոր մտածողների (Գրիգոր Տաթևացի, Անանիա Շիրակացի, Հովհաննես Սարկավագ, Շահամիր Շահամիրյան և ուրիշներ) հայացքների մանրամասն լուսաբանությամբ։ Վ. Զալոյանի «Հայոց փիլիսոփայության պատմությունը», որն ունեցավ երեք հրատարակություն (դրանցից մեկը՝ Մոսկվայում, 1974 թ.), ինչպես և նրա աշակերտների աշխատությունները վերջնականապես փարատեցին եղած կասկածները և ցույց տվեցին հայ ժողովրդի հոգևոր ժառանգության այն արժեքավոր մասը, որը դուրս էր մնացել ավանդական հայագիտության շրջանակներից։ Այդ աշխատությունը Վ. Զալոյանն իրավամբ համարում էր «իր կյանքի գլխավոր գործը»։

Մեծ դեր խաղաց նաև հայ փիլիսոփայական մտքի հուշարձանների հրապարակման և թարգմանության ասպարեզներում Վ. Զալոյանի ցուցաբերած նախաձեռնությունը։ 1956 թ. նա լույս ընծայեց XIV դարի ականավոր հայ փիլիսոփա Հովհան Որոտնեցու «Վերլուծութիւն Ստորոգութեանցն Արիստոտէլի» քննական բնագիրը, կցելով դրան զուգահեռ ռուսերեն թարգմանությունը (Արշակ Ադամյանի հեղինակակցությամբ), այնուհետև VI դարի մի կարևոր փիլիսոփայական երկի՝ «Մեկնութիւն Ստորոգութեանցն Արիստոտէլի» բնագիրը (1961 թ., Ս. Լալաֆարյանի աշխատակցությամբ), իսկ 1968 թ. Եղնիկ Կողբացու «Եղծ աղանդոցի» ռուսերեն թարգմանությունը։ Հայ փիլիսոփայական բնագրերի և նրանց ռուսերեն թարգմանությունների հրապարակումը ոչ պակաս կարևոր էր հայոց փիլիսոփայության իրավունքների հաստատման և համընդհանուր ճանաչում ձեռք բերելու տեսակետից։ Եվ այդ ճանաչումը եկավ։ Հայ փիլիսոփայական մտքի պատմությունը իր արժանի տեղը գրավեց Սովետական Միության ժողովուրդների և համաշխարհային փիլիսոփայության պատմության մեջ, այդ բնագավառի բացահայտման ու հետազոտման առաջնության պատիվը վերապահելով Վ. Զալոյանին։

Մեծ ճանաչում բերեցին Վ. Զալոյանին նաև «Հայկական ռենեսանս» և «Արևելք—Արևմուտք» աշխատությունները, որոնք լույս ընծայվեցին Երևանում և Մոսկվայում, իսկ «Արևելք—Արևմուտքը»՝ նաև Լեհաստանում։ «Հայկական ռենեսանս» մենագրության մեջ (1963 թ.), ինչպես և նույն հարցին նվիրված մի շարք հոդվածներում, Վ. Զալոյանը առաջ է քաշում X—XIII դդ. Հայաստա-

նում կապիտալի նախասկզբնական կուտակման, կապիտալիստական արտադրության սաղմերի առաջացման և նոր, հակաֆեոդալական միտումներ ունեցող մշակույթի ձևավորման պրոբլեմը։ Նա համոզված էր, որ այդ ժամանակաշրջանի մշակույթը, հատկապես նրա աշխարհիկ ուղղությունը հիմք են տալիս պնդելու, որ Հայաստանում Վերածնունդը սկսվել է ավելի վաղ, քան Արևմտյան Եվրոպայում։ Այդ տեսակետը բուռն վեճերի տեղիք տվեց, ունեցավ կողմնակիցներ, բայց ավելի շատ հակառակորդներ՝ հիմնականում պատմաբանների շրջաններում, որոնք ժխտելով կապիտալի նախասկզբնական կուտակման հանգամանքը, այնուամենայնիվ չկարողացան ընդունելի բացատրություն տալ արվեստի, ճարտարապետության, գեղարվեստական գրականության մեջ իրենց որոշակի արտահայտությունը գտած ռենեսանսային որոշ երևույթներին, որոնց վրա իր ուշադրությունն էր սևեռել Վ. Զալոյանը։ Այժմ, երբ կրքերը հանդարտվել են, Վ. Զալոյանի առաջ քաշած հայկական ռենեսանսի խնդիրը, մեր կարծիքով, նոր փաստերի լույսի տակ կարող է դուռ բանալ նոր հետազոտությունների համար, որոնք զերծ լինելով բանավիճող կողմերի ծայրահեղություններից, կկատարեն հայ միջնադարի հոգևոր արժեքների վերագնահատություն։ Բոլոր դեպքերում, ինչպես նշում է ակադ. Ն. Կոնրադը («Հայկական ռենեսանս» գրքի վերջաբանում), Վ. Զալոյանի աշխատությունը հնարավորություն է տալիս տեսնելու սեփական «Վերածննդի դարաշրջան» նաև հայ ժողովրդի պատմության մեջ, մի ժողովրդի, որն իր անցած հազարամյա պատմական ճանապարհին ունեցել է անտիկ շրջան և ավելի լուրջ հիմքեր կարող է ունենալ ավատատիրության ծագման վերջին փուլում նոր հիմքերի վրա «վերածնելու» հնագույն աշխարհիկ մշակույթի ավանդները։ Հարցի դրական լուծման հնարավորություններ որոնելիս միջնադարյան հայ մշակույթի մեջ հարուստ աշխարհիկ շերտի առկայության պայմաններում ոչ այնքան կարևոր է արտադրաեղանակի մեջ կապիտալիստականի սաղմեր որոնելը, որքան դրան նախորդող աշխարհայացքի ոլորտում տեղի ունեցած բեկումը։ Նման մոտեցման դեպքում Վ. Զալոյանի կոնցեպցիան, մեր կարծիքով, կարող է ունենալ ապագա, տալ իրոք դրական արդյունք «Հայկական վերածնության» պրոբլեմի լուծման ճանապարհին։ Վ. Զալոյանը համոզված էր, որ վաղ թե ուշ սովետահայ գիտությունը կրկին անդրադառնալու է Ռենեսանսի պրոբլեմին։ Դրա վերջնական լուծման գործում Վ. Զալոյանի արծարծած դաղափարները, անշուշտ, գրավելու են իրենց արժանի տեղը։

Վ. Զալոյանը հարյուրից ավելի գիտական աշխատությունների հեղինակ է, և դրանց մեծագույն մասը նոբություն էր բերում սովետահայ գիտական մտքին, առաջ մղում պատմափիլիսոփայական գիտությունը։ «Նոր խոսք ասել գիտության մեջ»,— այս էր Վ. Զալոյանի գործունեության նշանաբանը։ Նույնը նա պահանջում էր նաև իր աշակերտներից, մղելով նրանց ձեռագիր հարուստ ֆոնդերի ուսումնասիրմանը Մատենադարանում, հայոց փիլիսոփայության նոր դեմքերի և դաղափարների որոնմանն ու դրանց ինքնուրույն գիտական մատուցմանը։

Հայոց փիլիսոփայության պատմությունը, որը Վ. Զալոյանի եռանդուն գործունեության շնորհիվ նվաճեց իր արժանի տեղը հայագիտության և սովետական պատմափիլիսոփայության անդաստանում, այսուհետև ևս հարստանալու է նոր գործերով՝ լինեն դրանք առանձին մտածողներին նվիրված մենագրություններ, սկզբնաղբյուրների հրապարակումներ, թե բազմահատոր ընդհանրացնող աշխատություններ։ Բայց Վ. Զալոյանի՝ որպես հայ փիլիսոփա-

յության առաջին ուսումնասիրողի և հայագիտության այդ նոր ճյուղի հիմնադրի բարի անունը ընդմիշտ կմնա սովետահայ գիտության պատմության էջերում, իսկ նրա գիտական ժառանգությունը որպես կարևոր ավանդ ծառայելու է պատմափիլիսոփայական գիտության հետագա առաջընթացին։

ВАЗГЕН ЧАЛОЯН

(К 80-летию со дня рождения)

Член-корреспондент АН АрмССР С. С. АРЕВШАТЯН

Резюме

Видный советский армянский ученый, доктор философских наук, член-корреспондент АН АрмССР Вазген Карапетович Чалоян (1905—1981)—основоположник историко-философской науки в Армянской ССР, один из первых ученых, начавших изучение многовекового философского наследия армянского народа. В. К. Чалоян работал старшим научным сотрудником в Секторе философии со дня его организации (1943 г.), а затем в Институте философии и права (с 1969 г.) до конца своей жизни. За это время им было создано свыше 100 научных работ, в том числе 15 монографий. Среди них по своему научному значению и роли в становлении армянской историко-философской науки особо выделяются «Философия Давида Непобедимого» (Ер., 1946) и «История армянской философии» (Ер., 1959; издано также в Москве в 1974 г. и в Ереване в 1975 г.). Внимание научной общественности привлекли также исследования «Армянский Ренессанс» (М., 1963) и «Восток—Запад» (М., 1968; Варшава, 1980). Значительны также заслуги ученого в подготовке кадров по истории философии.

Заслуги В. К. Чалояна высоко оценены Советским правительством. Он был награжден орденом «Знак Почета» и медалями, удостоен звания заслуженного деятеля науки АрмССР и лауреата премии имени Месропа Маштоца.